

die einer solchen Rechnung an und für sich zukäme, da sie in dem Traktat des Ananias nicht enthalten und wohl nur eine spätere Einfügung ist, die allerdings auf antike Tradition zurückgehen mag.

(Schluß folgt.)



ՎՐԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

(Շարունակութիւն:)

Գ. ԳԼՈՒԽ

Վրաց Տարեգիրքը — Բարբրիս Յլովրէբա: Հայոց մասնակցութիւնը: Տարեգրքի աղբիւրներն եւ սրանց քննութիւնը: Տարեգրքի մասերը եւ պատմական շրջանները: Նրա քննադատութիւնը: Պատմագիր Վալսուշք եւ նրա գործերը: Ակադեմիկոս Բրոսէ (Brosset) եւ նրա մեծ աշխատութիւնը: Զուանշէրի հայերէն «Պատմութիւն վրաց»: Թէյմուրագ արքայադու «Իվերեայի պատմութիւնը»: Գրչագիրների խեղաքիրութիւնները:

Վրաց համբաւուր՝ «Վրաստանի Կեանքը» (վրացերէն Բարթիս Յլովրէբա) կոչուած Տարեգիրքը մի մեծածաւալ ազգային — պատմական հաւաքածոյ (compilation) է, գլխաւորաբար աւանդութիւնների վրայ հիմնուած: Ինչպէս առհասարակ բոլոր ազգերի, այնպէս էլ Վրացիների պատմութեան սկզբնական շրջանը լի է ժողովրդական զրոյցներով որոնք սերունդից սերունդ բերնէ բերան տարածուելով ընդհանրութեան սեպտականութիւն են դարձել եւ երբ յարմար պարագան ներկայացել է, մաս առ մաս գրի են առնուել ազգայ սերունդների համար: Փառարանելի ցեղի նախորդներին կամ երկրի այն սկզբնական առաջնորդներին, որոնք ցրուած ժողովուրդը հաւաքելով միութիւն եւ տէրութիւն են ստեղծել, այս է եղած, սովորաբար, աւանդութիւնների հաւաքման եւ գրի առման նպատակը:

Վրաց Տարեգիրքը երկու ստուար հատորից է բաղկացած, որոնց առաջինը սկսում է նախապատմական աւանդական շրջանի նկարագրութեամբ եւ հասնում է մինչեւ 1469-այս առաջին հատորը տարած է առաջին անգամ 1849ին Պետերբուրգում, ահագնաբար Մ. Բրոսէի ձեռքով: Երկրորդ հատորն, որ 1469ից մինչեւ 1800 շրջանն է ընդգրկում, հրատարակուած է 10 տարի վերջը, 1859ին, Վրացի Պրոֆ. Գ. Չուբինովի ղեկավարութեամբ: Այս երկու հատորներն իրենց բացարարութեան ոճովը զգալի կերպով տարբերում են միմիանցից: Ա. հատորի լեզուն տեղ տեղ այնպիսի բացատրութիւններ ունի, որոնք վրացերէն լեզուում այլ եւս չորձածութեան մէջ չեն. իսկ Բ. հատորը գրուած է ընդհանրապէս այժմեան գրական լեզուով: Տարեգիրքն իր այժմեան ձեւովը յորինուած ու կազմուած է ԺԸ. դարում:

Վրաց Վախթանգ Զ. Թագաւորն է եղած (ծն. 15 Մեպո. 1675), որ զործին հմուտ անձերից մի խմբազարկան Մասնատուրով կազմելով յորինել է տուած այս առաջին ազգային ընդհանուր պատմութիւնը: Տարեգիրքն սկսում է մի նախարանով, որ ուղղուած է Վրաց հասարակութեան եւ բացատրում է ժողովածոյի յորինման եղանակն ու նպատակը: Այս նախարանն է. «Պատուաւոր եւ անուանի Վրացիք: Վրաստանի պատմութիւնը ժամանակի ընթացքում, ընդօրինակողները ձեռքով փոփոխուած լինելով եւ մասամբ էլ դանազան հանգամանքների պատճառով բոլորովին գրուած չլինելով, Վախթանգ Ե. արքան, Լեւանի որդին եւ նշանաւոր Գիորգի Թագաւորի եղբորորդին, ուսումնական անձեր ժողովեց, եւ հաւաքել տուաւ Վրաստանի վերաբերեալ այն բոլոր ժամանակագրութիւններն, որ կարելի եղաւ գտնել, ինչպէս եւ այն հրովարտակներն, որ կային Մծխէթայում, Գէլաթում եւ ուրիշ շատ եկեղեցիներում եւ իշխանների քով: Այս բոլորը բազմաթիւ, ուղղեցինք ինչ որ փոխուած էր, ուրիշ գրուածքներ եւս ներմուծեցինք, հայ եւ պարսիկ պատմութիւններից քաղուածներ արինք եւ այս ձեւով ամբողջը գրել տուինք»¹:

¹ Վրաց այս արժանաշիշտակ ուսումնասէր արքան նախաձեռնարկ է եղած նաեւ Վրաց Օրէնագիրքի կազմելուն, այն ժամանակ երբ դեռ Թագաժառանգ էր: Այս ժողովածոյի նախարանի մէջ էլ առում է ինչ «Վախթանգ արքայորդին հաւաքեց օտար երկիրներում գոյութիւն ունեցող բոլոր օրէնագրութիւններն» այս նպատակի համար: Ի մէջ այլոց նա օգտուել է նաեւ Մխիթար Գօշի Դատաստանագրքից: Մի հայ վրացագէտ եկեղեցականի ձեռքով Թագաժառանգ է տուել ամբողջ հայկական Դատաստանագիրքն եւ կցել է իր ժողովածոյին: Մխիթար Գօշի այս վրացերէն

Այստեղ ամէնից յառաջ մեր ուշադրութիւնը գրաւում է «հայ պատմութիւնից քաղուածքներ» անելու գործը: Այս պարբերութիւնից երեւում է նախ, որ Վրաստանի Պատմութիւնը լրիւ գրելու համար Վախթանգ անհրաժեշտ է գտել հայ պատմութեան աջակցութեան զիմելու եւ երկրորդ՝ Վրաց Տագաւորի (Բարթի. Յլովր.) խմբազրութեանը բեղբի (Բարթի. Յլովր.) խմբազրութեանը մասնակցել եւն Հայեր: Վախթանգից հրաւիրուած ուսումնականները մէջ անհրաժեշտ էր, որ գտնուէին այնպիսի անձինք, որոնք հմուտ լինէին գրաբար հայերէնի եւ առանձնապէս հայ պատմագրութեան եւ այդպիսիներ նապէս հայ պատմագրութեան եւ այդպիսիներ կարող էին միայն Հայեր լինել, որովհետեւ իրոք շրջանն եւ պարագաներն ի նկատի առնելով, շատ դժուար է սպասել, որ որեւէ Վրացի այնչափ հայագէտ լինէր, որ ինքնուրոյն կերպով այդ պատասխանատու գործն ստանձներ:

Անտարակոյս հայ զրիշը մասնակցութիւն է ունեցած Վրաց Տարեգրքի խմբազրութեան մէջ: Բաւական է միայն ուշադրութեամբ կարդալ նրա աւանդական մասն եւ առհասարակ առաջին Գլուխներն, ուր պատմուած են Վրացի ժողովուրդի նախնապէս հայերէն խոսքերը, Վրաստանի վրայ իշխող Արշակեան հարստութեան պատմութիւնը, Հայոց հետ յարաբերութիւններն եւ հայկականից փոխառնուած զրոյցներն եւ պատմական դէպքերը եւայլն: Անկարելի էր, որ ծագումով եւ կրօնաւային Անկարելի էր, որ ծագումով եւ կրօնաւային նով վրացին այդչափ երկարօրէն եւ այդչափ բազմակողմանի կերպով համակրական լեզու գործածէր հայութեան նկատմամբ: Որոնք էին Վրաց Պատմագրութեան մասնակցող հայ զրիշները: Այս խնդիրը դեռ փնտում է լուսաբանել:

Բարթիս Յլովրէբայի Ա. հատորը հաւաքածոյ է մի շարք անանուն հեղինակների զրուածքների, զանազան ժամանակ, զանազան անձերի, հաւանականաբար եկեղեցականների ձեռքով խմբազրուած, որոնք պատմում են դէպքեր, մեծ մասամբ ժողովրդական թարգմանութիւնը՝ կարեւոր, հմուտից ծանօթութիւններով այս տեսակ նորերն, 1928ին Թիֆլիսում, Վրաց համալսարանի հայ վաստակաւոր ուսուցչապետ Վրաց համալսարանի հրատարակութեամբ: Լ. Մխիթարի Օրէնագիրքը՝ հրատարակուած է «Վախթանգի Օրէնագիրքը» Վրացի հրատարակչական ընկերութեան թարգմանութեամբ, ուսումնական նաեւ ուսուցչական թարգմանութեամբ, ուսումնական նաեւ ուսուցչական թարգմանութեամբ, ուսումնական նաեւ ուսուցչական թարգմանութեամբ: Յրէնկէլի ձեռքով եւ վրացի հնագէտ — պատմաբան Գ. Բաքրաձէի լուսարարութեամբ:

աւանդութիւններով հիւսուած, եւ որ գլխաւորն է՝ ոչ մի քուակամ չեն նշանակում քէ Ե՛րբ են տեղի ունեցել իրենց պատմած դէպքերը: Նրանք ոչ յայտնուած են թէ որտեղից են քաղել իրենց տեղեկութիւնները եւ ոչ էլ կենսագրական ծանօթութիւն են տալիս իրենց անձնաւորութեան մասին: Այս պատճառով էլ այդ հաւաքածոյն շատ քիչ վստահութիւն է ներշնչել ընթերցողներին: Հարկ եղաւ, որ նորագոյն քննադատներ ուսումնասիրեն ամբողջ գործը մանրամասնօրէն, համեմատութեան դնեն օտար աղբիւրների հետ, որոշեն ժամանակակից գործող անձերին եւ ըստ այնմ երեւան հանեն հեղինակներին եւ մասամբ նոյն իսկ այն աղբիւրներն, որոնցից սրանք օգտուել են, բայց աւելորդ են համարել յիշելը: Այս քննութիւններից երեւաց, որ Ա. հատորում գլխաւորաբար հետեւեալ աղբիւրներն են գործածուել:

Վրաստանի դարձը վերնագրով մի ժամանակագրութիւն, որտեղ պատմուած է քրիստոնէութեան մուտքն ու տարածումը իվէրեայում (Ibérie, Վրաստան) (Գ. դարում): Այս ժամանակագրութիւնն եւս ինքն ըստ ինքեան պատմական ստուգութիւնից զուրկ է եւ յետագոյն դարի գործ: Նրա սկզբնական եւ յետագոյն հեղինակի է վերագրուած, մասը անանուն հեղինակի է վերագրուած, իսկ միւս մասերը խմբազրողներն եղել են, զարձեալ ըստ աւանդութեան, Վրաստանի ազգաբնակչութեան ներսօյի ժամանակակիցներն, որոնք, իրենց ստելով Նիւսօյից են լսել իրենց պատմածները: Այս վերջինների թւումն է Մխիթար, Վրաց առաջին քրիստոնէայ Թագաւորը:

Մի լուրջ հայ վրացագէտի, Պրոֆ. Լ. Մէլիքեթիւթեղի քննութիւնների համաձայն, Բարթիս Յլովրէբայի աղբիւրներից մէկն է նաեւ Ազգաբնագրաւոր վրացերէն քարտեզագրութիւնը (նորերս հրատարակուած), այն մուրիւնը (նորերս հրատարակուած) տեսակետով, որ նրա բովանդակած տեղեկութիւնները անընդմիջապէս կամ միջնորդաբար (այն է «Մ. Նիւսօյի վարքը» գրուածքի միջոցով) մտած են Տարեգրքի մէջ, յատկապէս ուր խօսուած է առաջին քրիստոնէայ թագաւոր Մխիթարի մասին: Այս վրացերէն Ազգաբնագրութիւնը իրրեւ աղբիւր մտել ու գործաթանկեղութիւնը իրրեւ աղբիւր մտել ու գործածուել է Տարեգրքում, ոչ թէ Վախթանգ Զ. ի Յանձնատուրովի ժամանակ այլ շատ աւելի չին, այն է մօտաւորապէս ԺԲ. դարում, ոչ

